կթափանցեն վոտնամանի և հագուստի միջով  
և կվնասեն կաշին, իսկ կաշու միջով—և մար-  
դու ներքին գործարանները : Ամբողջ դորա-  
մասի, որինակ՝ գնդի, գումարտակի պաշտո-  
պանական հագուստ հակցնելը դժվար է : Ի՞նչ  
պետք է անել այդ գեպքում :

Ամենից առաջ, իհարկե, պետք ենայել,  
չի կարելի արդյոք վարակված տեղը շրջանցել :  
Բայց յեթե շրջանցելու հարմար և ձեռնոտու-  
ուղիներ չլինեն, այդ դեպքում մենք պետք ե-  
ղբաղվենք տեղանքում յեղած կայուն թ՞ե հե-  
ռացնելու և անվտանգ դարձնելու աշխատան-  
քով հատուկ տեխնիքական միջոցների ոգնու-  
թյամբ : Այդ աշխատանքը կատարում ե գնդի  
քիմիական դասակը կամ նրա մի մասը և կոչ-  
վում ե դեգազացիա, իսկ դեղազացիա անելու  
համար միջոցները—դեղազացիոն :

Գետնի դեղազացիայի համար գործ ե ած-  
վում այսպես կոչված քլորակիր : Այդ կիրը  
շաղ են տալիս թունավորված տեղամասում՝  
ընդ վորում շաղ տալը կատարվում ե հատուկ  
թմբուկների և դոզավոր թիակների ոգնու-  
թյամբ, իսկ ծայրահեղ դեպքում—բահով :  
Քլորակիր պաշար անպայման ամեն մի դորա-  
մաս պետք ե ունենա :

Վորեւ թունավորված տեղամաս դեղա-  
զացիա անելու համար վորքա՞ն քլորակիր է

պետք։ Դա կախված է նրանից, թե նա վորքան մեծ է, իսկ նրա համար հարկավոր քլորակիրի քանակը հաշվելու համար, պետք է նկատի ու-



Դեղազացիոն թմրուկ:

Դեղազացիոն դողագոր թի:

նենալ, վոր 1 քառ. մ. համար միջին հաշվով պահանջվում է 200–350 գ. քլորակիր, նայած տեղանքին։ Այսպես, բարձր բուսած կանաչ խոտերով տեղանքը, պահանջում է դեղազացիայի համար մեծ քանակությամբ քլորակիր (350 գ. 1 քառ. մ. վրա), վորին պետք է հետևի ջրելք։ Որինակ՝ 200 քառ. մ. տարածության համար պահանջվում է, յեթե ընդունենք 1 քառ. մ. համար 300 գ., 60.000 գ.


(300+200), կամ այլ կերպ տոտծ—60 կիլո  
քլորակիր:

Տեղանքի գեղազացման աշխատանքը պետք  
է կատարել հակազազերով և պաշտպանական  
հաղուստով։ Դեղազացիայից մոռավորապես  
60 բուզե հետո կարելի յե քիմիական ծառա-  
յության պետի կամ զորամտուի հրամատաբի  
թույլավությամբ՝ արգեն անցնել տեղանքի ա-  
ռաջուց թունտվորված տեղամասը։

Բայց գեղազացիայի կարիքը կարող է բա-  
զացվել և զազերի խրամատներում, ձորակնե-  
րում, բնակարաններում և անկայուն զազա-  
կերպ թն, որինակ քլորի, ֆոսգենի կուտակ-  
ման ժամանակ։ Այդ գեղքում գեղազացումն  
այլ կերպ կլինի, քան տեղանքը կայուն թն  
թունտվորված ժամանակ։ Այսպիս որինակ՝  
քլորը կամ ֆոսգենը խրամատից հեռացնելու  
համար, տվելի հեշտ և հեռացնել թն ձեռքի  
տակ յեղած միջոցներով, թոփ տարով  
ամենները, զրատները, վերմոկները։ Յե-  
թե մարտական պարագան հնարավորու-  
թյուն տա, կարելի յե թն հեռացնել խրա-  
մատներից, ձորակներից նաև խարույկների  
կամ առանձին գյուրապատ ծրաբներ վառելու  
ովնությամբ։ Վառելու ժամանակ գոյացուծ  
տաքացած ողի ձգողությունը վերե և տա-  
նում է թն։

Բնակարանների գեղազացիան, վորակեց  
անկայուն թն բանդ են յեղել, կատարում են  
հատուկ լուծույթներով, վորոնք չաղ են տա-

իիս առանձին գործ իքներով — ջրապուլտելով  
(աևս նկարը) : Զորակներում, խրամատաներում  
և բնակարաններում կուտակված անկայուն թէն



Կուտակվածը:

դեղազացիալի բալոր  
աշխատանքները կա-  
տարում են հակա-  
զազերում: Բնակա-  
րանների դեղազա-  
ցումը, վոր թունա-  
վորված են կալուն  
թէն, կատարվում և  
ջըի հետ թանձը  
խառնած քլորակրով  
իպրիտով զնաւ-  
փած գենքը դեղա-  
զացնելու համար,  
գործ են ածում  
նավթ կամ բենզին,  
վորոնցով գենքը լը-  
փանում են մի քանի

ոնդամ: Լվանալուց հետո զենքը պետք է հո-  
վաքել և յուղել: Այս աշխատանքն ել պետք է  
նույնպես կատարվել հակազազերով և ձեռնոց-  
ներով: Այն յաթերը, վորոնցով լվացել են զեն-  
քը, և նավթի կամ բենզինի ավելցուկները,  
վորոնց մեջ են դցել զենքի մանր մասերը, պետք  
է այլը, իսկ այն աեղերը, վորտեղ դեղազա-  
ցիս յեն կատարել, անզայման ցանել քլորա-  
կիր:

Անկայուն ԹՆ-ից զենքը պաշտպանում և  
լավ յուղելը:

Հագուստն և սպիտակեղենն անկայուն  
ԹՆ-ից գեղազգացվում և հովհարելով այնքան,  
մինչև ԹՆ հոտր կանհետանոտ: Հիշյալները կու-  
յուն ԹՆ թունավորված ժամանակ, որինակ՝  
իպրիտով, անհրաժեշտ է խնամքով մաքրել  
նրանց տաք գոլորշիով ախտահանական դոր-  
ծիքներում մինչև 120 աստիճան ջերմության  
մեջ: Իպրիտ ծծած հագուստն և սպիտակեղենը,  
կարելի յե նույնպես մաքրել դադակերպ քլո-  
րով, կամերայում:

Կայուն ԹՆ թունավորված կաշե վոտնա-  
մանը, դժվարությամբ և գեղազգացիայի յեն-  
թարկվում: Սակայն բենզինում թրջելը վոտ-  
նամանն անվտանգ և դառնում, բայց  
կաշին դրանից հետո դառնում և դյուրաքեկ,  
այնպես վոր գեղազգացիայից հետո պետք և հո-  
ձախ յուղել ճարպով:

ՔԻՄԻԱԿԱՆ ՎՃԱՆԴՅ ԿԱՆԽԵԼՈՒ ՌԺԱՆԴԱԿ  
ՄԻԶՈՑՆԵՐ.

Քիմիական վտանգը կանխելու ոժանդակ  
միջոցները կայանում են նրանում, վորպեսզի  
իր ժամանակին զգուշացնեն. 1) Հակառակորդի  
կողմից քիմիական հարձակման հնարավորու-  
թյան մասին և 2) հենց հարձակումն սկսվելու  
մասին, վորպեսզի զորքերին հնարավորություն  
տան պաշտպանության միջոցներ ձեռք առնե-

յու, տյսինքն իր ժամանակին հազնեն հակա-  
դագերը, անցնեն ապաստաններն և այլն։ Քի-  
միական հարձակման հնարավորությունը կան-  
խելու համար ծառայում են յեղանակը դիտելու  
վործիքները, վորոնք դիտության մեջ ընդուն-  
ված անվամբ կոչվում են ողերեւութարանս-  
կան, վորոնք ուսումնառիրում են ողի մեջ  
(մթնոլորտ) կատարվող յերեւյթները—ողե-  
րեւութարանության մեջ։


Ի՞նչը մեզ ամենից շատ պետք ե հետա-  
քրքրի յեղանակում քիմիական վտանգը կան-  
խելու համար։

Ամենից առաջ քամին, նրա ուղղությունն  
և ուժը։ Դեպի մեզ փչող քամու ժամանակ,  
միշտ ել կարելի յե սպասել քիմիական հար-  
ձակման, թեկուզ ամպանման գրոհի ձեռվ։  
Դեպի հակառակորդը փչող քամու ժամանակ,  
այլպիսի գրոհում սպասելի չե, վորովհետե-  
թի այս դեպքում կինասեն հենց իր զորքերին։

Քամու ուժը պետք ե նկատի ունենալ ինչ-  
պես թշնամուց պաշտպանվելու համար, այն-  
պես ել թշնամու վրա մեր հարձակման համար։  
Բայց և այնպես քամու ժամանակ միշտ ել ձե-  
ռնոտու չե քիմիական հարձակում կատարել։  
Որինակ քամու մի վայրկյանում Յ. արագու-  
թյան ժամանակ, նույնիսկ նրա բարեհաջող  
ուղղության միջոցին, այսինքն դեպի հակա-  
ռակորդի կողմն ամպի գրոհը սակավ ներդոր-  
ծող ե։ Այդ տեսակ քամու ժամանակ թի շատ  
արագ ցրվում են և չեն կարող այդ պատճառով

Հուկառակորդին կորուստներ պատճառել :

Քամու ուղղությունը զիտելու համար գործ է ածվում վիմպելը (դրոշակ) . (ահօ նկարը) : Դա մի նեղ, թեթև ժամափեն է, վորն ամբացված է հարթ ձողի վրա և մեկ ու կեսից—յերկու մետր բարձրություն ունի : Իսկ ժամափենի յերկանքությունն է—մոտ կես մետր :



Վիմպել  
(դրոշակ)

Հողմաչափ

Քամու արագությունը վորոշելու ամենապարզ գործիքը կոչվում է հողմաչափ . (ահօ նկարը) : Դա—մի թիթեղե տախտակին է, վորք գտնվում է շրջանակի մեջ, կախված է նրա վե-

լին ծայրից, և ազեղնածե քանոն բաժանմունք-  
ներով: Քամին ճնշում և թիթեղե տախտա-  
կիկը, ստխապելով նրան ճոճվել և ցույց տալ այս  
կամ այն բաժանումը: Քանոնի բաժանումնե-  
րով ել վորոշվում և քամու արագությունը:

Հակառակորդի քիմիական հարձակման ըս-  
կիզրը նախազգուշացնելու համար կան քիմիա-  
կան ազդանշանների միջոցներ—նշանաձողեր,  
վոր փաթաթված են նավթով ծծեցրած ծղնո-  
սով. հրթիռներ. սիրենները (դռնչանները),  
զանգերն և հեռախոսը, ընդ վորում հեռախո-  
սով սովորաբար ոգտվում են քիմիական տազ-  
նապի մասին թիկունքին հաղորդելու համար:  
Բոլոր մարտիկները պետք է առաջուց գիտե-  
նան, թե հատկապես հիշված միջոցներից, վորը  
ցույց կտրվի ինչպես ֆիմիական վտանգի  
(տագնապի) ազդանշան:

## ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՄԱՐՏԻԿՆ ԻՐԵՆ ՊԱՀԻ ՀԱ- ԿԱՌԱԿՈՐԴԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱ- ՄԱՆԱԿ.

Հակառակորդի քիմիական հարձակումը  
կարող է մուրտիկին գտնել տարբեր պայմաննե-  
րում. զորամասը տեղում տեղավորված ժամա-  
նակ, յերթում, մարտում:

Զորամասը տեղում հակառակորդից մեծ  
հեռավորության վրա տեղավորված ժամանակ  
կարելի յէ քիմիական հարձակում սպասել մի-  
այն վերելից, այսինքն հակառակորդի սավառ-  
նակներից:

Այդ տեսակ հարձակման տեղեկությունները հեռախոսով կամ ողացին զիտողության ազդանշանով ստացած ժամանակ կամ յերբ մարտիկն ինքն և նկատում թշնամու ինքնաթիւոք, հակապաղը փոխադրում են «պատրաստի» գրության: Հեծելազորում, հրետանիում և գումակներում հագցնելու համար պատրաստ են պահում և ձիու հակաղաղերը: Քիմիական զիտողների, քիմիական վտանգի ազդանշան տալիս կամ թե իրեն մարտիկի թն ամենաչնչին նշաններ հայտաբերելիս բոլոր մարդիկ և ձիեր հակաղաղեր են հագնում անմիջապես:

Բայց զորամասը կարող ե աեղավորվել հակառակորդից այնպիսի հեռավորության վրա, վորը հնարավոր ե զարձնում ամպի գըրուներ կամ հրետանական քիմիական զնդակոծություն:

Գնդակոծությունն սկսվելուն պես հակաղաղերն իսկույն փոխադրվում են «պատրաստի» գրության, իսկ քիմիական զիտողների քիմիական վտանգի մասին տված աղդանշանի ժամանակ—հաղնում են հակաղաղերը, նույնպես և հագցնում են ձիերին: Ամպի գրոհի դեպքում քիմիական տագնապի հնչյունական կամ լուսեղեն աղդանշանի կամ մարտիկներից վորեւ մեկի թն ամենանվազ հոտ հայտաբերելու ժամանակ, մարդիկ հագնում են հակաղաղերն և նույնը հագցնում են ձիերին: Թունավոր ամպի մեջ ընկած մարտիկներն և գումակ-

ները շարժումը դադարեցնում են այնքան, մինչև վոր ԹՌՆ ալիքն անց կենա:

Յերթում մարտիկն եւ ամբողջ զորամասը կարող են հանդիպել առաջուց պալարային ներդործության կայուն թՌՆ թունավորված ճանապարհի տարածության: Այս գեղքում զորամասը միջոցներ եւ ձեռք առնում քիմհետախուզություն եւ գեղազացիա կատարելու, իսկ անհատ մարտիկը պահպանում եւ պալարային ներդործության կայուն թՌՆ-ից քիմիական պաշտպանության հաստոկ կանոնները (տես ցածում):

Սակայն զորամասը յերթում կարող եւ քիմիական հարձակման յենթարկելու և ողից:

Այդ գեղքում ողային հակառակորդի յերեալու մասին տված ազդանշանն ստանալուն պես մարտիկը, չմոռանալով քողարկումը, հակազազը փոխում եւ «պատրաստի» զբության, իսկ քիմիական դիտողների քիմիական վասնողի ազդանշան տված ժամանակ հագնում եւ այն: Ընդ վորում պետք եւ հիշել, վոր յեթե ողային հակառակորդը դործի յեւ դրել անկայուն թՌՆ ողաքիմիական ոռումքեր, այդ գեղքում մարտիկներին հակազազերով կարելի յեւ անցկացնել թՌՆ ամպի միջով: Իսկ յեթե նա զործում է կայուն թՌՆ ողաքիմիական ոռումքերով, այդ գեղքում կայուն պալարային թՌՆ ազդեցության տակ ընկած մարտիկներին, պետք եւ անմիջապես տանել ողաքիմիական ոռումքերի ճագարից

Հողմաբեր կողմը և իսկույն և յեթ յենթարկել  
մանրազնին սանխտարական մաքրման:

Մարտում կարմիր բանակայինը կարող է  
հանդիպել հակառակորդի քիմիական հարձակ-  
ման բոլոր տեսակներին: Հակընդդեմ հարձակ-  
ման ժամանակ, յերբ պահապան զորամասերը  
կամ գնդի գլխավոր ուժերը բացաշատում է  
մարտ են մտնում, կարելի յե սպասել, վոր հա-  
կառակորդը կհրածդի մեր գնդացիրները, հրե-  
տանին և ոժանդակները հրետանու քիմիական  
արկերով, վորպեսզի մեր պահապան զորամա-  
սերը կտրվեն գլխավոր ուժերից: Հենց գրոհի  
սկզբին հակառակորդը կարող է փորձել գնդա-  
կոծել մեզ հրացանային քիմիական նոնակնե-  
րով: Այդ գեպքերում քիմիական պաշտպանու-  
թյան համար կարմիր բանակայինը պետք է  
հրետանական գնդակոծության սկզբին և հա-  
կառակորդին մոտենալու հետ հակագաղերը  
տեղափոխի «պատրաստի» դրության: Քիմիա-  
կան արկերով կամ հրացանային քիմիական  
նոնակներով գնդակոծությունը հայտարերելիս  
անմիջապես հագնել հակագաղերը:

Հակառակորդի պաշտպանական չերտի վրա  
մեր հարձակման ժամանակ՝ մարտիկը պետք է  
խիստ աշալուրջ լինի: Զգուշության և աշ-  
լրջության դեպքում միայն նա կարող է հնա-  
րավորություն ունենալ արագ և իր ժամանա-  
կին միջոցներ ձեռք առնել պաշտպանվելու  
հակառակորդի քիմիական հարձակումից, վո-  
րը կանգնած և անշարժ և նշանակում է կարող

և կիրառել հարձակման ցանկացած յեղանակ-ները մինչեւ ամպե գրոհը ներառյալ:

Մեր պաշտպանության ժամանակ հակառակորդը կարող է մեր զորամասերը գնդակոծել հրետանական քիմիական կայուն թն արկերով, կայուն և անկայուն թն՝ գազանետերով: Նա կարող է ողաքիմիական ոմբանետումն սկսել մեր թիկունքների և զորքերի մեծ խըռնիածության տեղերի վրա և նետել ձեռքի քիմիական նոնակներ, նույնակես և հրացանային քիմիական նոնակներով մեր հետեւակի մանր խմբերը գնդակոծել:

Մարտիկի քիմիական պաշտպանության միջոցներն այդ տեսակ մարտում նույնն են, ինչ զոր տեղում մեր զորամասերի տեղավորվելու ժամանակ, շարժման և յերթի ժամանակ և հանդիպող հարձակման ժամանակ: Այդ միջոցները — ինչպես փորձը ցույց տվեց և ինչպես ամեն մի կարմիր բանակային կարողացավ համոզվել ծուխ դնելով և զորաշարժերում լրիվ կերպով պաշտպանում են հակառակորդի թն-ից, վոր գործադրում են ցանկացած յեղանակով:

Ի՞նչ պետք է անի մարտիկը կայուն պալարային թն-ից քիմիական պաշտպանության ժամանակ, յերբ նա նրանց հետ ընդհարվի: Ի՞նչպես պետք է լինի այս դեպքում նրա վերարկրմունք:

1. Թն հոտն ամենանվազ շափով զգալիս — հագիր հակագազը: Աւշադիր յեղիր թն հոտը

վորոշելիս և մի մոռացիր, վոր հակառակորդը  
կաշխատի այն քողորկել, այսինքն ամեն մի-  
ջոցներով ծածկել, իսանել ուրիշ հոտերի  
հետ, վորոնք թ' հետ ընդհանուր վոչինչ չու-  
նեն:

2. Մի թագնվիր հրետանական արկերի  
պայթյունից զոյացած ձագարների մեջ, վո-  
րովհետեւ այդ ձագարները կարող են քիմիական  
արկերից կայուն կամ կուտակված անկայուն  
թ' առաջացած լինել: Երջանցիր նրանց և  
միշտ ել հողմարեր կողմից:

3. Այն տեղամասը, վորը թունավորված և  
պալարային ներգործության թ' կերա-  
սումն սպասել, գետնին մի՛ նստիր և մի՛ պառ-  
կիր: Խուսափիր նստել և սողալ ծնկների վրա,  
նույնիսկ պաշտպանական հազուստում յեղած  
ժամանակ:

4. Այն տեղերում, վորտեղ կարելի յե պա-  
լարային ներգործության կայուն թ' կերա-  
սումն սպասել, գետնին մի՛ նստիր և մի՛ պառ-  
կիր: Խուսափիր նստել և սողալ ծնկների վրա,  
նույնիսկ պաշտպանական հազուստում յեղած  
ժամանակ:

5. Մի՛ կպիր արկերի և ուրիշ առարկանե-  
րի կատածելի բծերով կառրատանքներին: Այդ  
դեպքերում դիմիր բահի ու կեռի ողնության:

6. Հիշե՛ր, վոր իպրիտով թունավորվելը  
կատարվում և վայրկանաբար, թեկուզ այդ  
բանը դու իսկույն չզգաս, այլ հայտաբերես  
6, 12, 24 ժամ անցնելուց հետո միայն: Աւտոի  
մի՛ փոխանցիր թաքնված թունավորումը  
մարմնիդ այլ մասերի վրա: Մի՛ քորվիր: Զես-  
քերդ վորքան կարելի յե հաճախ լվա ոճառով:

7. Մի՛ մոռանա, վոր խպրիան ամենից շատ  
վտանգավոր և չնչելու գործարանների, աչքե-  
րի, սեռական գործարանների և յետեի անցքի  
համար, ուստի և աչքերդ հաճախ լվա մաքուր  
ջրով։ Մի՛ միղիը և մի՛ գնա արտաքնոց, ա-  
ռանց ձեռքերդ ախտահանելու, սեռական գոր-  
ծարաններն և յետեի անցքը չվարտկելու հա-  
մար։ Մի՛ ոգտվիր քիմիական վտանգի տեսա-  
կետից կասկածելի տեղանքի արտաքնոցներից։

8. Շոգ որերին նախազգուշությունդ կըրկ-  
նապատկիր, վորովհետեւ այդպիսի որերին խղ-  
րիան ավելի ուժեղ և գոլորշիանում։

9. Հակաքիմիական տեսակետից սարքա-  
վորված ապաստան մտնելու միջոցին դրառում  
թող վերևի հագուստդ, նույնպես և այն ա-  
ռարկանները, վորոնք յեղել են թն ներգոր-  
ծության տակ, թն ապաստանը չտանելու  
համար։

10. Մտի՛ր ապաստանի մեջ, զգուշու-  
թյամբ բաց անելով վարագույրը, քեզ հետ  
թն չտանելու համար։

11. Ապաստանում իրավունք չունես ծխե-  
լու։

ԴԱՇՏՈՒՄ ԹՆ ՅԵՎ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՔԻՄԻԱ-  
ԿԱՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅՏԱԲԵՐԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Դաշտում թն իր ժամանակին հայտաբե-  
րումը մեզ հնարավորություն ե տալիս արա-  
գությամբ և լրիվ կերպով ոգտագործել պաշտ-

պահության բոլոր միջոցներն ու յեղանակները։ Հակառակորդի քիմիական հարձակման պատրաստության իր ժամանակին հայտարերումը մեզ վոչ միայն հնարավորություն կտալավ ոգտագործել մեր պաշտպանության միջոցները, այլև աշխատանքի դնել մեր սավառնակները, հրետանին և մեր քիմիական զորքերը, հակառակորդի հարձակումը խոնդարելու համար կամ ստիպել նրան բոլորովին հրաժարվելու հարձակվելուց։

Թե՞ իր ժամանակին հայտարերելու ամենալավ յեղանակը, նույնպես և մեզ վրա քիմիական հարձակման պատրաստությունը հայտարերելը, դա— ֆիմիական հետախուզության լավ դրված աշխատանքի արդյունքն է։

Քիմիական գասակի կատարած քիմիական հետախուզությունը և զորական հետախուզական զորամասերին հաղորդելը, հայտարերում և հակառակորդի կողմից նախորոք թունավորած տեղանքի տեղամասերը։ Առանձնապես պատրաստած քիմիական գիտողների միջոցով նա պետք է ժամանակին հայտարերի նույնպես և քիմիական հարձակման պատրաստությունը և հենց հարձակման սկիզբը։ Դրա համար քիմիական գիտողները դրվում են տեղանքի այնպիսի տեղամասերում, վորտեղից ամենից շատ կարելի յե սպասել հակառակորդի քիմիական հարձակման այս կամ այն յեղանակի կիրառումը։ Այդ տեղամասերը վորոշվում են նաև քիմիական հետախուզությամբ։

Քիմիական հետախույզներն և դիտողները  
ամենից առաջ քթով (Հոտառությամբ) պետք  
է կարողանան վորոշել, կա՞ն արդյոք ողում  
և գետնի յերեսին թ՞ե։ Հոտառությունը դեռ  
մինչև այժմ հանդիսանում է գրանց վորոշելու  
ամենալավ միջոցը։

Աւզիղ չե ի հարկե կարծել, վոր քիմիական  
դասակի անձնական կազմը միայն պետք է կա-  
րողանա հոտառության ողնությամբ հայտա-  
րեցրել թ՞։ Այդ բանը պետք է կարողանա ա-  
նել յուրաքանչյուր կարմիր բանակային— հե-  
տախույզ, վորովիետև հետախուզությունում  
ամեն ժամանակ ել կարող է մասնագետ-քիմիկ  
չլինել։ Բացի գրանից պետք է նկատի ունենալ,  
վոր քիմիական գիտողների ողնականներն և  
ձեռքի տակ աշխատողները պետք է ջոկվեն  
կարմիր բանակայինների վաշտերից և հեծե-  
լավաշտերից։ Նշանակում ե, կարողանալ հո-  
տառությամբ հայտաբերել թ՞ ներկայու-  
թյունը պետք է սովորի յուրաքանչյուր կար-  
միր բանակային։

Իսկ ի՞նչպես հայտաբերել հակառակորդի  
քիմիական պատրաստությունը։

Կարելի յե հայտաբերել ամենից առաջ  
ինքնաթիւից և կապավոր ողապարփկից, այ-  
սինքն ողից դիտելով։ Ողից կարելի յե վորոշել  
այդ ոլտաբաստառթյունը հակառակորդի առա-  
ջավոր խթամատներում կատարած հողային աշ-  
խատանքներով, նրա մերձավոր թիկունքում  
մեքենաների և սայլերի վոչ սովորական տե-

դաշտիքումով։ Այս բոլորը— գաղամաններով (գաղաբալոնային) գրոհի պատբաստության նշաններ են։ Հայտաբերվում ե այդ նաև քիմիական գիտողների կողմից, վորոնք գիշերն ուժեղացվում են քիմիական գաղոնքներով, մետաղի զրնդոցի հատուկ աղմուկով, քամուժամանակ թև թեթև հոտով, վորը փչում ե դեպի մեղ և դալիս ե սովորաբար հակառակորդի անսարք գաղամաններից։

Հարձակման սկիզբը հայտաբերվում է թե գաղամաններից թողած ժամանակ հատուկ, լավ ծանոթ թշոցի և սուլոցի ձայններից, թունավոր-ծխային գլանների գործածման ժամանակ առաջ յեկած թշոցով և լոցերով։ Հակառակորդի գաղանետով դնդակոծության ժամանակ կրակի ուժեղ բռնկումով։ Հրետանական քիմիական հրածդության ժամանակ յեղած հոտով և ամպից։ Կան և այլ նշաններ, վորոնք ծանոթ են փորձված և լավ պատրաստված քիմիական գիտողներին։

Քիմիական գաղոնքը և քիմիական գիտողները, հարձակման սկիզբը հայտաբարելով, անմիջապես տալիս են ֆիմիական վտանգի (տագնապի) ազդանշան, այն միջոցներով, վորոնք մենք վերեւում ցույց ենք տվել։ Այդ աղդանշանն անմիջապես ընդունում և հաղորդում են տեղավորության խորքը կապի հատուկ պոստերը կամ այլ կերպ—ֆիմիական տագնապի պռատերը։

1914-1918թ.թ. պատերազմը ցույց տվեց,

վոր քիմիական հետախուզության, քիմիական գիտողության և քիմիական տագնապի լավ հիմքերի վրա դրված ծառայության ժամանակ, միշտ ել հնարավոր ե հայտաբերել հակառակորդի ֆիմիական հարձակման պատրաստությունը կամ ծայրահեղ դեպքում այդ հարձակման սկզբելու մոմենտը։ Նույնպես և նրանց կողմից վաղորոք կայուն թն թունավորած տեղանքի տեղամասերը։

ԿԵՐԱԿՈՒՐԸ ՑԵՎ ԶՈՒՐԸ ԹՆ-ԻՑ ՊԱՇՏՊԱ-  
ՆԵԼՈՒ ՑԵՂԱՆԱԿՆԵՐԸ.

Մննդամթերքը խիստ կրանում են թն։ Ուստի ոգտվել նրանցից այն բանից հետո, վոր նրանք գտնվել են կայուն թն թունավորված ողում, վոչ մի դեպքում չի կարելի։ Իսկ այն մթերքները, վորոնք յեղել են անկայուն թն աղդեցության տակ, կարելի յե կերակրի մեջ դործածել, միայն նրանց ամենամեծ խնամքով յեփելուց և տապակելուց հետո, և այն ել բժշկի թույլտվությամբ նրանցում կասկածելի չոտ չլինելու դեպքում։

Մթերքները թն աղդեցությունից պաշտպանելու համար, անհրաժեշտ ե պարենի մեծ պաշար պահել հակաքիմիապես սարքավորված պահեստներում։ Սայլերով և ձեռքով տեղափոխելիք մթերքները պետք ե ձյութած թրղթերով տուփերի մեջ դարսել կամ թե չե դրանցով մթերքները փաթաթել դրսից։

Այն ջուրը, վորի մեջ կա թն, ել տվելի

վասանգավոր և մարդկանց և անասունների հա-  
մար, քան կերակուրը: Զուրբն անկայուն թն-ից  
մաքրելու համար ամենալավ միջոցը, դա—յե-  
ռացնելին է: Լավ յեռացրած ջուրը պետք և վոր  
ազատի թն հստից և այդ կերպ անվատնով է:  
Պալարային ներգործության կայուն թն թու-  
նավորված ջուրը, չի յենթարկվում զաման  
մինչեւ խել և յեռացնելիս և այդ պատճառով ել  
վոչ մի գեղքում չպետք և գործածի վոչ խմե-  
լու, վոչ կերակուր յեփելու, վոչ լիացվելու,  
վոչ ըլացքի համար. ջուրը յեռացնելուց հետո  
թն հստի անհետացումը չի նշանակում, վոր  
ջուրն անվատնով է:

### ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՆ-ԻՑ ՏՈՒԺԱԾ- ՆԵՐԻՆ.

Թն վնասվելիս ամենից առաջ չպետք և ի-  
րեն կորցնել, այլ աշխատել առաջին ոգնու-  
թյունը հասցնել առեժածներին անհապաղ:  
Այդ գեղքում հիշի՞ր հետեյալը.

1. Թույլ մի՛ տուր, վորպեսպի վնասված  
մարտիկի թունավորումը շարունակվի: Դրա  
համար նրան անմիջապես հաղցրու հակապաղը  
և գուրս առը կամ առաջնորդիր նրան թունա-  
վորված տեղից գուրս դալու:

2. Պառկեցրու առեժածին, հանիր նրա  
վրայից վերեկի շորերը, վորոնց մեջ կարող ելին  
բանդ լինել թն: Տաք ծածկիր և տուր նրան  
տաք կաթ կամ թեյ:

3. Յեթի հիշանդր ծանր և շնչում, նրան

առար չնչելու թթվածնոյին բարձիկից։ Իսկ  
յեթե հիշյալից ձեռքի տակ չգտնվի, ա-  
ռանց հապազման և պատղարակի վրա պետք է  
թունավորվածին մոտակա բժշկական կայանը  
տեղափոխել։

4. Բաղրիառվ վնասվելու դեպքում ոգնու-  
թյան այլ միջոցների հետ ոնչըաժեցու և ան-  
միջազնու լվանալ նավթով կամ բենզինով կաշ-  
վի վնասված տեղերը թն, և ապա վնասված  
տեղերը լվանալ տաք ջրով և սաղոնով։

5. Աչքերի գրգռման դեպքում պետք է լր-  
վանալ յերկածխաթթվածնոյին սողայի լու-  
ծույթով—մի բաժակ ջրին մի թեյի գղալ,  
խել խորիսով թունավորվելու դեպքում—նր-  
բանց անմիջազնու լվանալ սողայի նույն տե-  
սակ լուծույթով։

6. «Արտասվարեր» թն թունավորվելուց  
հետո առառ արտասվածնոսության և գլխացա-  
վի ժամանակ վնասված մարտիկին թունավոր-  
ված վայրից տեղափոխելուց կամ դուրս առաջ-  
նորդելուց բացի, պետք է աչքերը լվանալ բո-  
րոկաթթվի լուծույթով։ Աչքերը չարորել։

7. «Փոշտացնող» թն վնասված ժամանակ  
պետք է քթի խոռոչն ու աչքերը լվանալ սո-  
ղայի լուծույթով։

8. Թունավորվածին առաջին ոգնությունը  
ցույց տալուց հետո, անմիջազնու հանգիստ գլ-  
բությամբ նրան հասցնել մոտակա բժշկական  
կայանը։

ԱԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹՆ-ԻՑ .


ԹՆ-ԻՑ կենդանիների պաշտպանությունն  
ըստ մեծի մասին պետք է կատարել մարդկանց  
պաշտպանության հետ միաժամանակ։ Ճիշտ  
է, վոչ բոլոր կենդանիներն են միատեսակ  
զգում ԹՆ, ինչպես մարդը։ Արինակ ձին չի  
վախենում պալարային ներդործության ԹՆ  
իր կաշու վրա ունեցած նվազ քանակով աղղե-  
ցությունից։ Նրա կաշու խոցոսավող տեղերն են  
միայն շրթունքները, քթածակերը, սեռական  
գործարանները, յետեկ անցքը։ Զիու թոքերը  
նույնակես քիչ են վախենում (աղղվում) ԹՆ,  
քան մարդու թոքերը։ Նույնը պետք է ասել  
նաև ձիու աչքերի մասին։ Սակայն նրա աղիք-  
ներն եւ ստամոքսն  
ավելի զգայուն են։

Զիու վոտները,  
դիխավորապես ան-  
տեղում, վորաեղ  
ոմբակը մանեւմ ե  
կաշու մեջ, նույն-  
ողես սաղտիկ աղ-  
ղվում եւ մինչե իսկ  
իսպիտի նվազ քա-  
նակից։ Այստեղից  
կարելի յե հասկա-  
նալ, թե ձիու ինչը  
և ինչպես պաշտպա-  
նել քիմիական հար-  
ձակման ժամանակ։



Զիու կրկեկներ

Զիու հակադաղը (տես նկարը) կարող է  
նրա աչքերը չծածկել, բայց նա անպայման և  
շատ լավ պետք է ծածկի նրա քթածակերը,  
վորովհետեւ ձին չնչում ե վոչ թե բերնով, այլ  
քթով։ Զիու հակադաղը մի տոպըակ է, վորը  
կազմված է լուծույթներով հագեցրած բաղմա-  
շերտ զործվածքից, և ընդունակ է չնորհիվ  
իր հագեցման բանդ անել (կլանել) թունավո-  
րող նյութերը, վորոնք բաց են թողված ողի  
մեջ և գետնի վրա։



Հակադաղ պաշտպանական  
դրությամբ։ 1—Ճակատա-  
փոկ. 2—Տափակ կեռ.  
3—Կախելու ժապավեն.  
4—Առածգական ժապա-  
վեն. 5—Ողեր. 6—Կեռ.  
7—Անթափանց գործվածք.  
8—Դիմակ։

#### ՁԻՈՒ ՀԱԿԱԴԱՂԸ

Պալարային թն-ից վոտերը պաշտպանե-  
լու համար ծառայում են ձիու հատուկ կոչիկ-  
ները (տես նկարը) և պայտի մետաղե բար-  
ձիկները։ Այդ բարձիկները դանվում են պայ-  
տի և սմբակի միջև և պաշտպանում են պայտ-  
րական թն-ից վոտի ցածի մասը, վորտեղ  
պմբակը մտնում է կաշվի մեջ։

Զիոն կոչիկներն անցյալ 1914-1918 թ. թ.  
պատերազմին ամերիկացիք պատրաստեցին  
հատուկ բաղադրություններով ծծեցրած սո-  
տինից, վորն անթափանցելի յէ խպրիտի հա-  
մար: Կոչիկը միանում եր ամբողի հետ և հա-  
նում եր մինչև ծունկը:

Ինչպես հայտնի յէ, շներին ոգտագործում  
են մեծ չափով պատերազմի ժամանակ կապի  
համար և սանիտարական զործում, ուստի և  
նրանց քիմիական օգաջապահնության զործը  
պատերազմում—չառ կարեւոր խնդիր և: Շահ  
հակապազր (տես նկարը) պատրաստվում է



ՊԱՅՏԻ ԲՈՐԳԻԿ:



ՀԱԿԱԳՈԶ ՇՆԵՐԻ ՀԵՎԱՐ

Փրանելից և ծածկում և ամրող գլուխը: Հո-  
կագազի գիմակում կան տոպրակներ տնկված  
և կախ ընկած ականչների համար: Հատուկ  
բաղադրություն տնեցող—ցելլոնից ակնոց-

ներ, վորոնք գրվում են դիմակի աչքերի անցքերի մեջ:

Դիմակը հնարավորություն և տալիս շանը շարժել ծնոտները: Հակագաղում շները ծառայություն կտառարելուն ընտերանում են շատ լավ:

Փոստային ազավնիների ոլաշտպանությունը, վորոնց շնչառական դործարանները յենթարկվում են թիւ աղդեցության, հարկավոր և միայն նրանց ազավնատան մեջ դանված ժամանակ: Թոփչքի ժամանակ ազավնիները բարձրանում են թիւ ամպից վեր, ուստի և մնում են անվտանգ: Ազավնիներին լավ պաշտպանում ենին հատուկ արկղները—վոքրիկ ապաստանները, վորոնց մեջ դրսի ողն անցնում է միայն հակագաղի կլանիչի միջով:

Ապագա պատերազմում մենք կարող ենք հանդիպել և մյուս կենդանիների պաշտպանության գործի անհրաժեշտության հետ, ուրինակ՝ յեղջյուրավոր անասունի, վորն ավելի շատ զգայուն և դեպի թիւ, քան մարդը: Նրանց պաշտպանները միջոցներ փնտուելու աշխատանքը պետք է տարվի առանց թուլացման:

### ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.

Ել ի՞նչ կարելի յե տսել քիմիական վտանգի մասին, ծանոթանալով այն բանի հետ, ինչի մասին խոսվեց մեր գրքույկում:

Առաջին, զա այն ե, վոր «գաղեր»—ը սարտափելի յին միայն նրա համար, ով ծանոթ չէ

նրանց, ով նրանց ազդեցության մասին ձիչտ  
հասկացողություն չունի:

Յերկրորդ—վոր պատերազմում պետք է  
միշտ և ամեն տեսակ պարագայում մոտդ հա-  
կագաղ ունենաս:

Յերրորդ—վոր պետք և կարողանալ ժա-  
մանակին և աբագ ողտմել նրանից և դրա հա-  
մար խաղաղ ժամանակ, սօվորել նրա հաղնե-  
լու կանոնները:

Չորրորդ—վոր հարկավոր և քիմիական  
վտանգի (տագնապի) ազգանշանները լավ գի-  
տենալ և քո պարտականությունները քի-  
միական վտանգից հետո:

Հինգերորդ—վոր պետք և վարժեցնես  
(մարզես) քո հատառությունը լավ հոտոտելու  
համար:


Վեցերորդ—վոր քիմիական վտանգի ժա-  
մանակ վոչ փախիր, վոչ ել խուճապի յեն-  
թարկվիր, այլ հանգիստ և աբագ դիմիր քեզ  
հայտնի պաշտպանության միջոցին կամ յե-  
ղանակին:


Յոթերորդ—վասնգի մեջ չթողնել ընկե-  
րոջը, ոգնել նրան հակագաղը փոխնլու կամ  
նրան առաջին ոգնությունը ցույց տալու:

Ութերորդ—հոգ տար քո մարտական ըն-  
կերոջ—ձիու մասին. ժամանակին հաղցրու  
ձիուն հակագաղը, մի՛ թող նրան, վոր խմի և  
խոտ կրծի թ՛ն, կասկածելի տեղերում և վեր-  
ջապես իններորդ— վոր պարզապես «գազը  
սարսավելի չե, յեթե կա հակագաղ և քիմիա-  
կան կարգապահություն»:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչ են գաղերը . . . . .	5
Ինչու ավելի նիշտ և «գաղեր» անունը փոխել «մարտական քունավորող նյութեր» բառերով . . . . .	5
Ինչպես են ներգործում ԹՌ մարդու վրա . . . . .	6
Ինչպես են զործադրում ԹՌ պատերազմում . . . . .	9
Քիմիական հարձակումներ կլինիկ արդյուն ապագա պատերազմում . . . . .	13
Մարդկանց պաշտպանությունը ԹՌ-ից . . . . .	16
ԹՌ պաշտպանվելու անձնական միջոցները . . . . .	17
Հակագագերից ոգտվելու կանոնները . . . . .	21
Հակագագ Տ. Տ.-4 . . . . .	24
Հակագագ Տ. Տ.-C. . . . .	30
Պաշտպանական հագուստ և պաշտպանական այլ միջոցներ մարմնի դրսի կրգմի համար . . . . .	31
ԹՌ-ից պաշտպանվելու «խմբակային միջոցները . . . . .	34
Միջոցներ ԹՌ հեռացնելու այն տեղերից և նյութերից, վորտեղ նրանք բանդ են լինում (դե- գագացիա) . . . . .	37
Քիմիական վտանգը կանխելու ոժանդակ միջոցներ . . . . .	42
Ինչպես պետք է մարտիկն իրեն պահի հակա- ռակորդի քիմիական հարձակման ժամանակ . . . . .	45
Դաշտում ԹՌ և հակառակորդի քիմիական հարձակման պատրաստությունը հայտարերելու յեղանակները . . . . .	51
Կերակուրք և ջուրը ԹՌ-ից պաշտպանելու յեղանակները . . . . .	55
Առաջին ոգնությունը ԹՌ-ից տուժածներին . . . . .	56
Կենդանիների պաշտպանությունը ԹՌ-ից . . . . .	58
Յնքակացություն . . . . .	61





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039087

(1363)

ԳԻՆԸ 15 ԿՈՂ.

A I 4489